ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

   Արայիկ Խզմալյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա)

   2022 թվականի հունիսի 10-12-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ՌԴ մշակույթի նախարարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն «Ռուսաստանում Հայաստանի մշակույթի օրեր» միջոցառմանը

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Գործուղման ընթացքում հանդիպել եմ Ռուսաստանի դաշնության մշակույթի նախարարի տեղակալ, պետքարտուղար Ալլա Մանիլովայի հետ, քննարկվել են գեղարվեստական կրթության ոլորտում համագործակցության հեռանկարները և ձևաչափերը, մշակութային ժառանգության վերականգնման փոխգործակցության ներկա վիճակն ու առաջիկա ծրագրերը, ինչպես նաև աշնանը Հայաստանում կայանալիք Ռուսաստանի հոգևոր մշակույթի օրերի ծրագիրը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի շրջանակում Ռուսաստանում հունիսի 10-13-ը անց է կացվել «Հայաստանի մշակույթի օրեր Ռուսաստանի Դաշնությունում» ծրագիրը: Հունիսի 10-11-ը միջոցառումները կայացել են Մոսկվայում, իսկ հունիսի 13-ին՝ Կիսլովոդսկում:

Մշակույթի օրերի ծրագրում էին Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի և Կոմիտասի անվան ազգային քառյակի համերգները:

Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը հանդես է եկել Չայկովսկու անվան համերգասրահում՝ բացելով Հայաստանի մշակույթի օրերի միջոցառումները: Միջոցառման բացմանը հանդես եմ եկել նաև ողջույնի խոսքով:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել ռուսական պատվիրակության կազմի, քննարկման դրվելիք հարցերի և իրականացման վայրերի վերաբերյալ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայ-ռուսական մշակութային համագործակցության և գեղարվեստական կրթության ոլորտում առնչությունների ակտիվացում և խորացում: Մասնագիտական-ստեղծագործական փոխըմբռնման ծրագրերի իրականացում:

Արայիկ Խզմալյան

15.06.2022